

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

« 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Արմավիրի մարզային հանձնաժողովի նիստի

Ք. Արմավիր

15.08.2014թ. ժ.10⁰⁰

Նիստը նախագահում էր « Արմավիրի մարզպետ, « 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Արմավիրի մարզային հանձնաժողովի նախագահ պարոն Աշոտ Ղահրամանյանը:

Մասնակցում էին « 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման Արմավիրի մարզային հանձնաժողովի անդամները, Արմավիրի մարզի բոլոր համայնքների ղեկավարները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները, ԶԼՄ-ների ներկայացուցիչները:

Ներկա էին « Ազգային վիճակագրական ծառայության նախագահ, « 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահի տեղակալ պարոն Ստեփան Մնացականյանը, « վիճակագրության պետական խորհրդի անդամ, « 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի անդամ, գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները համակարգող պարոն Գագիկ Անանյանը, « Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ստորաբաժանումների ու գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) վարչության աշխատակիցներ Վարդան Գևորգյանը, Արսեն Ավագյանը, Գոհար Նշանյանը և Ռոբերտ Գևորգյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նպատակը և կարևորությունը:
2. Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման աշխատանքների ընթացքը:
3. Մարզային հանձնաժողովի և համայնքապետների կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին.

ա) հաշվարարների թեկնածուների ներկայացում

բ) գյուղապետարանների, դպրոցների, մանկապարտեզների կամ այլ հանրային բնույթի շենքերում ժամանակավոր՝ **մինչև 3** (հրահանգչական տեղամասերի) և **4** (հաշվառման տեղամասերի) ամիս տևողությամբ սենյակների տրամադրում

4. Այլ հարցեր (հարց ու պատասխան):

Բացման խոսքով հանդես եկավ նիստը նախագահող, ՀՀ Արմավիրի մարզպետ պարոն **Աշոտ Ղահրամանյանը**:

Նա ողջունեց նիստի մասնակիցներին և առաջարկեց աշխատանքը սկսել համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ներկայացված օրակարգի: Օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնելու համար նա խոսքը տվեց ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանին:

Ս.Մնացականյանը շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին, անդամներին, համայնքների ղեկավարներին և մյուս մասնակիցներին մարզային հանձնաժողովի նիստին մասնակցության համար ու առաջարկեց սկսել աշխատանքը համաձայն օրակարգի:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը (համակարգչային ներկայացմամբ 16 պատկեր համառոտագիրը, որը կցվում է) ըստ հերթականության ներկայացվեցին պարոն Ս. Մնացականյանի կողմից:

Ս.Մնացականյանի կողմից հատուկ առանձնացվեցին այն հիմնահարցերը, որոնք առաջնահերթ են ԳՀՀ նախապատրաստական աշխատանքների իրականացման շրջանակում:

Այնուհետև Ա. Ղահրամանյանի և Ս. Մնացականյանի կողմից առաջարկվեց անկաշկանդ քննարկել հետաքրքրող ցանկացած հարց: Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքների ղեկավարները և այլ մասնակիցներ:

Հնչեցված հարցերը վերաբերում էին գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին, համայնքներում տնտեսություններին և համայնքին պատկանող հողերի փաստացի չափերի և համայնքների հողային հաշվեկշռի (կադաստրային չափագրումների) համապատասխան ցուցանիշների միջև առկա տարբերությանը (անհամապատասխանությանը), համատարած հաշվառման իրականացման սեղմ ժամկետներին, ԳՀՀ ընթացքում իրավաբանական անձանց կողմից լրացվող «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գյուղատնտեսական նշանակության հողերի, գյուղատնտեսական կենդանիների և ձկնաբուծության առկայության վերաբերյալ հարցաթերթ»-ի լրացման առանձնահատկություններին և մի շարք այլ խնդիրներին:

Համայնքների ղեկավարների կողմից բարձրացված հարցերին Ս. Մնացականյանը տվեց սպառիչ պատասխաններ:

Պարոն Ա. Ղահրամանյանն իր և հանձնաժողովի մյուս անդամների անունից շնորհակալություն հայտնեց ՀՀ ԱՎԾ նախագահ պարոն Ս. Մնացականյանին հանգամանալից զեկույցի, բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տալու համար և նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզում ս/թ հոկտեմբերի 11-ից 31-ը գյուղատնտեսական համատարած հաշվառումը կանցկացվի բարձր կազմակերպվածությամբ: